2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՆՇԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբեր, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 5
ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ 11
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 11
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԿՓ առնչություն ունեցող ծախսերի բաշխումն ըստ քաղաքականության ոլորտների և ուղղությունների 12
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿՓ առնչություն ունեցող ծախսերի նշագրման շրջանակը (տվյալների բազան) 13

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԿԲՆ	Կլիմայական բյուջետային ծախսերի նշագրում
ԿՀԾԻՈՒ	Կլիմայական հանրային ծախսերի և ինստիտուցիոնալ ուսումնասիրություն
ԿԾ	Կլիմայական ծախսեր
ԿՓ	Կլիմայի փոփոխություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՖԿ	Հանրային ֆինանսների կառավարում
ՄԱԶԾ	Միավորված ազգերի զարգացման ծրագիր
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՋԳ	Ջերմոցայային գազեր
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին Հայաստանում էական քայլեր են ձեռնարկվել կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության բաղադրիչները ազգային և ոլորտային քաղաքականության մեջ արտացոլելու, ինչպես նաև՝ կլիմայական քաղաքականության իրականացմանն ուղղված բյուջետային ծախսերի գնահատման և բացահայտման ուղղությամբ:

Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության խնդիրների ինտեգրումը ՀՀ ՀՁԿ համակարգում առավել խորացնելու, և կլիմայական հանրային ծախսերի գնահատման արդյունավետ մեխանիզմների ներդրման նպատակով ՄԱԶԾ-ի «Կլիմայական խոստում Հայաստան. խոստումից ազդեցություն» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում մշակվել է կլիմայական բյուջետային ծախսերի նշագրման (ԿԲՆ) մեթոդաբանություն և կիրարկման ուղեցույց, որոնք փորձարկվել են ՀՀ ընտրված պետական մարմիններում:

Սույն վերլուծական հաշվետվությունը մշակվել է Ծրագրի «Պետական բյուջեի գործընթացում կլիմայական բյուջետային ծախսերի նշագրման դասընթացների կազմակերպում» առաջադրանքի շրջանակներում: Հաշվետվությունն ամփոփում է ԿԲՆ ուղեցույցի՝ ընտրված պետական կառավարման մարմիններում պիլոտային կիրարկման արդյունքները:

Պիլոտին մասնակից պետական մարմիններն են՝

- ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ),
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ),
- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (ԷՆ),
- ՀՀ վարչապետի աշխատակազմը (ՎԱ),
- ՀՀ ֆինանսների նախարարությունը (ՖՆ):

Պետական մարմինների ընտրությունը պատահական չէ: Ընդգրկվել են այն պետական մարմինները, որոնք պատասխանատու են ջերմոցային գազերի հիմնական արտանետող (մեղմման ոլորտներ), ինչպես նաև հարմարվողականության ոլորտների զարգացման քաղաքականությունների մշակման և իրականացման համար և, ըստ այդմ, հանդիսանում են կլիմայի փոփոխության քաղաքականությունների մշակման և/կամ իրականացման կարևոր դերակատարներ: ՀՀ ֆինանսների նախարարության ընտրությունը պայմանավորված է բյուջետային գործընթացում ունեցած դերով և դրանում ԿԲՆ հետագա ինտեգրման մեթոդաբանական հարցերի դիտարկման և հստակեցման կարևորմամբ:

ԿԲՆ փորձարկումն իրականացվել է 2025 թվականի պետական բյուջեի նախագծի հիման վրա: Արդյունքները հետագայում ճշգրտվել են ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենքի[1] հաստատումից հետո:

[1] Ընդունվել է 2024 թվականի դեկտեմբերի 4-ին:

2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԿԲՆ ուղեցույցի փորձնական կիրարկմանը, ինչպես նշվեց, մասնակցել են պետական կառավարման հետևյալ մարմինները՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ վարչապետի աշխատակազմը և ՀՀ ֆինանսների նախարարությունը: Մասնակից պետական մարմինների կողմից իրականացվող բյուջետային ծրագրերին ուղղվում է պետական բյուջետային ծախսերի 23.4 տոկոսը կամ 806.3 մլրդ դրամ: Այս պետական մարմինների կողմից իրականացվում են թվով 51 բյուջետային ծրագրեր, կամ 264 բյուջետային միջոցառումներ, որոնք կազմում են պետական բյուջետային ծրագրերի և միջոցառումների համապատասխանաբար 29.7 և 31.9 տոկոսը:

ԿԲՆ պիլոտում ընդգրկված բյուջետային միջոցառումներին 2025թ. պետական բյուջեից նախատեսվում է ուղղել 806.3 մլրդ դրամ (այսուհետ նշագրված ծախսեր):

Աղյուսակ 1. ԿԲՆ մասնակից պետական մարմինների կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի ամփոփ ցուցանիշներ

Պետական մարմին	Բյուջետային ծրագրերի քանակ	Բյուջետային միջոցառումների քանակ	Ընդամենը բյուջետային ծախսեր, մլրդ դրամ	Կշիռը պետական բյուջեում, տոկոս
ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	6	27	14.5	0.4
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	20	107	288.4	8.4
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	10	67	79.5	2.3
ՀՀ վարչապետի աշխատակազմ	11	50	24.3	0.7
ՀՀ ֆինանսների նախարարություն	4	13	399.6	11.6
Ընդամենը	**51**	**264**	**806.3**	**23.4**

Աղբյուրը՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏԶՀԿ հաշվարկներ

Համաձայն ԿԲՆ արդյունքների, նշագրված 264 բյուջետային միջոցառումներից ԿՓ առնչվող են 138-ը: Կլիմայի փոփոխությանն առնչվող բյուջետային ծախսերը (կլիմայական ծախսերը) կազմում են պիլոտին մասնակից պետական մարմինների ընդամենը բյուջետային ծախսերի 14.7 տոկոսը կամ 118.5 մլրդ դրամ և 2025 թվականի ընդամենը բյուջետային ծախսերի 3.4 տոկոսը:

Աղյուսակ 2. ԿԲՆ մասնակից պետական մարմինների ԿԲՆ ամփոփ ցուցանիշներ

Պետական մարմին	ԿՓ առնչվող միջոցառումների քանակ	Կշիռը պետական մարմնի միջոցառումների թվում	ԿՓ առնչվող ծախսեր, մլրդ դրամ	Կշիռը պետական մարմնի ընդամենը ծախսերում, տոկոս
ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	27	100.0	12.9	88.9
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	81	75.7	82.6	45.0
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	30	44.8	22.9	64.6
ՀՀ վարչապետի աշխատակազմ	0	0	0	0
ՀՀ ֆինանսների նախարարություն	0	0	0	0
Ընդամենը	**138**	**52.3**	**118.5**	**14.7***

*_կշիռը պոտական բյուջեի ընդամենը ծախսերում

Աղբյուրը՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏՋՀԿ հաշվարկներ

ԿԾ մոտ 10.9 տոկոսը (12.9 մլրդ դրամ) կազմում են ՇՄՆ բյուջետային ծրագրերի միջոցառումները: ՏԿԵՆ-ին բաժին է ընկնում ծախսերի 69.8 տոկոսը (82.6 մլրդ դրամ), իսկ ԷՆ-ին բաժին է ընկում ծախսերի 19.3 տոկոսը (22.9 մլրդ դրամ):

Յուրաքանչյուր պետական մարմնի ընդամենը բյուջետային ծախսերում կլիմայական ծախսերի մասնաբաժնի մակարդակով առաջատարը ՇՄՆ-ն է: ՇՄՆ ընդամենը ծախսերի 88.9 տոկոսը ԿԲՆ արդյունքներով գնահատվել են որպես կլիմայական ծախսեր: ԷՆ-ի դեպքում այս ցուցանիշը կազմում է 28.8 տոկոս, իսկ ՏԿԵՆ-ի դեպքում՝ 28.7 տոկոս:

ՀՀ ՖՆ և ՀՀ ՎԱ բյուջետային ծրագրերը չեն ներառում կլիմայի փոփոխությանն առնչվող ծախսեր:

Գծապատկեր 1. 2025 թվականի կլիմայական ծախսերի կառուցվածքն ըստ պետական մարմինների, տոկոս



Գծապատկեր 2. Կլիմայական ծախսերի կշիռը պետական մարմնի բյուջետային ծախսերում, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏՋՀԿ հաշվարկներ

ԿՓ առնչվող միջոցառումների մեծ մասը՝ 81-ը կամ 58.7 տոկոսը հանդիսանում են ՏԿԵՆ բյուջետային ծրագրերի միջոցառումներ, 30-ը՝ ԷՆ-ի, իսկ 27-ը՝ ՇՄՆ բյուջետային միջոցառումներ են:

Գծապատկեր 3. ԿՓ առնչվող միջոցառումների կառուցվածքը, տոկոս



Գծապատկեր 4. ԿՓ առնչվող միջոցառումների կշիռը պետական մարմնի բյուջետային միջոցառումների թվում



Աղբյուրը՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏԶՀԿ հաշվարկներ

Բյուջետային միջոցառումները՝ ըստ կլիմայի փոփոխությանն արձագանքման ուղղությունների[2] դասակարգվում են հետևյալ երկու խմբերում.

- **Մեղմման միջոցառումներ** - որոնք նպաստում են մթնոլորտում ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների կրճատմանը կամ ՋԳ կլանման ընդլայնմանը
- **Հարմարվողականության միջոցառումներ** - որոնք ուղղված են նվազեցնելու ԿՓ հետևանքների և կլիմային առնչվող ռիսկերի նկատմամբ մարդու կամ բնական համակարգերի խոցելիությունը՝ պահպանելով կամ բարձրացնելով ԿՓ հետևանքներին հարմարվելու և դիմակայելու կարողությունները:

Կլիմայական ծախսերի 78.5 տոկոսը կամ 93.0 մլրդ դրամը (112 միջոցառում) հանդիսանում են ԿՓ հարմարվողականությանն ուղղված ծախսեր, իսկ 21.5 տոկոսը կամ 25.5 մլրդ դրամը (26 միջոցառում)՝ ԿՓ մեղմմանն ուղղված ծախսեր:

Մեղմման քաղաքականությունը մեծամասամբ իրականացվում է ՏԿԵՆ բյուջետային ծրագրերի շրջանակներում, իսկ հարմարվողականության քաղաքականության իրականացմանը մասնակից են բոլոր 3 պետական մարմինները:

[2] Վ. Սիրունյան «Կլմայական բյուջետային ծախսերի նշագրումը Հայաստանում. Մեթոդաբանություն»:

Գծապատկեր 5. 2025 թվականի կլիմայական ծախսերն ըստ կլիմայի փոփոխությանն արձագանքման ուղղությունների



Աղբյուրը՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏՋՀԿ հաշվարկներ

ԿՓ մեղմման ծախսերի գերակշիռ մասը՝ 43.9 տոկոսը, **Տրանսպորտի** ոլորտում իրականացվող ծախսեր են (ներառում է Երևանի մետրոպոլիտենի և Հարավկովկասյան երկաթուղու հետ առնչվող ծախսերը), հաջորդում է **Կառուցված միջավայր** ոլորտը՝ 29.0 տոկոս կշռով: Ծախսերի ոլորտային բաշխման հիմքում ՀՀ-ում կլիմայական միջոցառումների/ծախսերի նույնականացման տիպաբանությունն է:

Գծապատկեր 6. ԿՓ մեղմման ծախսերի բաշխումն ըստ քաղաքականության ոլորտների, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏՋՀԿ հաշվարկներ

ԿՓ հարմարվողականությանն ուղղված ծախսերի գերակշիռ մասն իրականացվելու է **Ջրային ռեսուրսներ** (39.5 տոկոս) ոլորտում: Հաջորդում են **Բնակավայրեր, ենթակառուցվածքներ և էներգետիկա** (23.8 տոկոս) և **Գյուղատնտեսություն** (23.1 տոկոս) ոլորտները:

Գծապատկեր 7. ԿՓ հարմարվողականության ծախսերի բաշխումն ըստ քաղաքականության ոլորտների, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏՋՀԿ հաշվարկներ

Կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանն առնչվող բյուջետային ծախսերում էական է արտաքին ֆինանսավորման դերը:

Կլիմայական ծախսերի 33.4 տոկոսը կամ 39.6 մլրդ դրամն իրականացվում է արտաքին աջակցությամբ իրականացվող բյուջետային միջոցառումների շրջանակներում: Մասնավորապես, 27.4 տոկոսն իրականացվում է նպատակային դրամաշնորհների, իսկ 72.6 տոկոսը՝ նպատակային վարկերի միջոցներով:

Կլիմայի փոփոխությանն առնչվող բյուջետային միջոցառումների արտաքին ֆինանսավորումն իրականացնող հիմնական գործընկեր կազմակերպություններն են Գերմանիայի զարգացման վարկերի բանկը, Եվրասիական զարգացման բանկը, Եվրոպական ներդրումային բանկը և Ասիական զարգացման բանկը:

Գծապատկեր 8. 2025 թվականի կլիմայական ծախսերի ֆինանսավորման աղբյուրները, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏՋՀԿ հաշվարկներ

ԿԲՆ մեթոդաբանությունը սահմանում է նաև յուրաքանչյուր բյուջետային միջոցառման շրջանակներում կլիմայական ծախսերի մասնաբաժնի որոշման չափանիշներ: ԿՓ առնչվող միջոցառումներն ըստ կլիմայի փոփոխությանն առնչության մակարդակների դասակարգվում են հետևյալ խմբերում՝

- Ուղղակի առնչություն ունեցողներ,
- Բարձր առնչություն ունեցողներ,
- Միջին առնչություն ունեցողներ,
- Ցածր առնչություն ունեցողներ:

Ուղղակի առնչության բյուջետային միջոցառումները դրանք կլիմայի փոփոխության ոլորտում քաղաքականությունը սահմանող փաստաթղթերում ընդգրկված կամ ԿՓ առնչվող նպատակադրումներով բյուջետային ծրագրերում ընդգրկված միջոցառումներն են (ԿՓ առնչության կշիռը 100 տոկոս է (տե՛ս Հավելված 2)): Այդպիսի միջոցառումները թվով 43-ն են: Այս միջոցառումների շրջանակներում կլիմայական ծախսերը հաշվում են ընդամենը գնահատված կլիմայական ծախսերի 39.6 տոկոսը կամ 46.9 մլրդ դրամ:

Կլիմայական ծախսերի 50.2 տոկոսը կամ թվով 51 միջոցառում հանդիսանում են ԿՓ բարձր առնչություն ունեցող միջոցառումներ: Այս միջոցառումների գծով կլիմայական ծախսերը կազմում են 59.5 մլրդ դրամ: Համապատասխանաբար, միջին առնչություն ունեցող միջոցառումների (կլիմայական չափավոր օգուտներ ապահովող) դեպքում կլիմայական ծախսերը կազմում են կլիմայական բյուջեի 2.9 տոկոսը, իսկ ցածր առնչություն ունեցողների (կլիմայական ցածր օգուտներ ապահովող) դեպքում՝ 7.3 տոկոսը:

Գծապատկեր 9. Կլիմայական ծախսերի բաշխումն ըստ ԿՓ առնչության մակարդակի





Աղյուսակ 3. 2025 թվականի ԿՓ առնչվող միջոցառումների բաշխումն ըստ առնչության մակարդակի

Առնչության մակարդակ	Միջոցառումների քանակ		Կլիմայական ծախսեր	
	հատ	տոկոս	մլրդ դրամ	տոկոս
Ուղղակի առնչություն	43	31.2	46.9	39.6
Բարձր առնչություն	51	37.0	59.5	50.2
Միջին առնչություն	10	7.2	3.5	2.9
Ցածր առնչություն	34	24.6	8.6	7.3
Ընդամենը	**138**	**100.0**	**119.3**	**100.0**

Աղբյուրը՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏՋՀԿ հաշվարկներ

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. 2025 թվականի կլիմայական ծախսերի կառուցվածքն ըստ պետական մարմինների, տոկոս 6

Գծապատկեր 2. Կլիմայական ծախսերի կշիռը պետական մարմնի բյուջետային ծախսերում, տոկոս 6

Գծապատկեր 3. ԿՓ առնչվող միջոցառումների կառուցվածքը, տոկոս..... 7

Գծապատկեր 4. ԿՓ առնչվող միջոցառումների կշիռը պետական մարմնի բյուջետային միջոցառումների թվում 7

Գծապատկեր 5. 2025 թվականի կլիմայական ծախսերն ըստ կլիմայի փոփոխությանն արձագանքման ուղղությունների 8

Գծապատկեր 6. ԿՓ մեղմման ծախսերի բաշխումն ըստ քաղաքականության ոլորտների, տոկոս 8

Գծապատկեր 7. ԿՓ հարմարվողականության ծախսերի բաշխումն ըստ քաղաքականության ոլորտների, տոկոս 9

Գծապատկեր 8. 2025 թվականի կլիմայական ծախսերի ֆինանսավորման աղբյուրները, տոկոս 9

Գծապատկեր 9. Կլիմայական ծախսերի բաշխումն ըստ ԿՓ առնչության մակարդակի.....10

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. ԿԲՆ մասնակից պետական մարմինների կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի ամփոփ ցուցանիշներ 5

Աղյուսակ 2. ԿԲՆ մասնակից պետական մարմինների ԿԲՆ ամփոփ ցուցանիշներ..... 6

Աղյուսակ 3. 2025 թվականի ԿՓ առնչվող միջոցառումների բաշխումն ըստ առնչության մակարդակի..... 10

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԿՓ առնչություն ունեցող ծախսերի բաշխումն ըստ քաղաքականության ոլորտների և ուղղությունների

ԿՓ արձագանքման ուղղություն/ Քաղաքականության ոլորտ	Քաղաքականության ուղղություն	Կլիմայական բյուջե	
		մլն դրամ	տոկոս
Մեղմում		**25,490.6**	**100.0**
Գյուղատնտեսություն	Անասուններ	241.6	0.9
Էներգետիկա	Արտանետումային ցածր հզորություն	628.0	2.5
	Էներգիայի փոխանցում և բաշխում	1,845.6	7.2
	Վերականգնվող էներգիա	115.6	0.5
Թափոններ	Կոշտ թափոնների կառավարում և վերամշակում	866.5	3.4
Խաչվող հարցեր	Քաղաքականություն և կարգավորում	72.2	0.3
Կառուցված միջավայր	Հանրային ծառայություններ	784.6	3.1
	Շենքեր	6,617.7	26.0
Հողօգտագործում և անտառտնտեսություն	Անտառային տնտեսություն	3,130.3	12.3
Տրանսպորտ	Միջքաղաքային տրանսպորտ	173.3	0.7
	Վառելիք և ճանապարհային տրանսպորտային միջոցներ	12.7	0.05
	Քաղաքային տրանսպորտ	11,002.5	43.2
Հարմարվողականություն		**92,985.4**	**100.0**
Բնական էկոհամակարգեր և կենսաբազմազանություն	Անտառներ	7,049.7	7.6
	Բնական կենսավայրերի պաշտպանություն	797.9	0.9
	Պաշտպանություն անապատացումից	994.4	1.1
Բնակավայրեր, ենթակառուցվածքներ և էներգետիկա	Շենքեր	4,000.0	4.3
	Ջրհեղեղներից պաշտպանության ենթակառուցվածքներ	583.0	0.6
	Տրանսպորտ - հաղորդակցության բարելավում	16,849.7	18.2
	Տրանսպորտ - վտանգների նվազեցում	696.8	0.8
Գյուղատնտեսություն	Անասուններ	1,848.5	2.0
	Բուսաբուծություն և մշակաբույսերի պաշտպանություն	15,016.0	16.2
	Գյուղատնտեսական արտադրանքի վրա հիմնվող գյուղական համայնքների կենսապահովման աջակցություն	3,121.2	3.4
	Ջրի օգտագործման արդյունավետության բարձրացում	1,503.7	1.6
Խաչվող հարցեր	Կրթություն և իրազեկում	10.2	0.0
	Հետազոտություն	1,260.5	1.4
	Քաղաքականություն և կարգավորում	2,519.9	2.3
Ջրային ռեսուրսներ	Դրենաժ	195.0	0.2
	Ոռոգման ապահովում	25,722.7	21.5
	Ջրամատակարարման և ջրահեռացման ապահովում	9,390.1	10.1
	Ջրային ռեսուրսների կառավարում	1,426.1	7.8

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿՓ առնչություն ունեցող ծախսերի նշագրման շրջանակը (տվյալների բազան)

Ներկայացված է կից Excel ֆայլով: CBT_DATABASE_26.12.xlsx